

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՎԱՐ

Թեմա՝ Պրոբլեմային ուսուցում

Կազմեց՝ Մերի Հակոբյան Գևորգի

<<Կապանի №1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի №1 հիմնական դպրոց>>
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Նախաբան

Թեմայի արդիականությունը: Ուսումնական գործընթացի զարգացման, կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաներ մշակման, որոնց շարքում է նաև պրոբլեմային ուսուցումը: Պրոբլեմային ուսուցումը ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպում է, որը սովորողին ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, չիմացածն ու անհայտը որոնելու, խնդիրը լուծուլու և վերջնական նպատակին հասնելու հնարավորություն է ընձեռում: Պրոբլեմային իրավիճակը նպաստում է սովորողների մտածողության մակարդակի բարձրացմանը: Յուրաքանչյուր սովորողի կողմից չի կարող յուրացվել նույն աստիճանով, քանի որ տարբեր սովորողներ ունեն տարբեր ընդունակություններ:

Գիտական վարկած: Խնդրակենտրոն դասավանդումը պարունակում է տարբեր, որոնք ինչ-որ չափով հիշեցնում են արհեստանոցում վարպետին աշակերտելու սկզբունքը: Աշակերտն աստիճանաբար ձեռք է բերում դիտարկվող դերը ստանձնելու համար անհրաժեշտ հմտությունները:

Գլուխ 1. Պրոբլեմային ուսուցում-ուսումնասրություն

Պրոբլեմային ուսուցումը ուսուցչի կողմից հաղորդվող այն շարադրանքն է, որը պարունակում է ճանաչողական դժվարություն, ճանաչողական հարց կամ խնդիր, որոնք առաջ են բերում իրավիճակներ, որոնց հաղթահարման համար սովորողները կատարում են որոնողական, հետազոտական աշխատանքներ, ի հայտ է բերում նյութի մեջ եղած հակասությունները: Պրոբլեմային ուսուցման ընթացքում բացահայտվում են և լուծվում հակասությունները արվում են դատողություններ, կառուցվում են վարկածներ: Սովորողներին պրոբլեմը լուծելու գործողություններին վարժեցնելու նպատակով ուսուցիչն ինքն է ստեղծում պրոբլեմային իրավիճակ, ինքն է որոնում դրանց հաղթահարման ուղիները և հասնում վերջնական նպատակին:

Գլուխ 1.1 Պրոբլեմային խնդիր և պրոբլեմային իրավիճակ

Պրոբլեմային խնդիրն այն խնդիրն է, որի լուծման համար սովորողները որոնում են նոր գիտելիքներ, գործողությունների նոր եղանակներ: Պրոբլեմային իրավիճակը այն դժվարագույն կացությունն է, որն առաջանում է սովորողների հոգեվիճակում ծագած խնդիր, հարցի, փաստի և անհայտի հայտնաբերման եղանակների և մեթոդների միջև հակասությունների հիման վրա:

Գլուխ 1.2 Պրոբլեմային ուսուցման ֆունկցիաներ

Պրոբլեմային ուսուցումը կատարում է զարգացնող և դաստիարակչական ֆունկցիաներ: Զարգացնող ֆունկցիաները բազմազան են: Այսպես, օրինակ, մոդելավորվում է աշակերտների մտածողությունը: Ուսումնական առարկաների տրամաբանությունը մոտեցնում է գիտությունների տրամաբանությանը, իսկ ուսուցման տրամաբանություն՝ ճանաչողական տրամաբանությանը: Պրոբլեմային ուսուցումը ունի հատուկ դաստիարակչական ֆունկցիաներ: Դրանցից են սովորողների ստեղծագործաբար ստեղծագործական հմտությունների դաստիարակումը, ձեռք բերված գիելիքների ստեղծագործումը, ստեղծագործական փորձի կուտակումը: Օգնում է աշակերտին դառնալ ինքնուրույն ու անկախ սովորողներ:

Գլուխ 1.3 Պրոբլեմային ուսուցման կազմակերպման մակարդակները

- Ուսումնական նյութի պրոբլեմային ներկայացում ուսուցչի կողմից: Ուսուցիչը նպաստում է սովորողի ինքնուրույն մտածողության ձևավորմանն ու զարգացմանը: Պետք է ստեղծել պրոբլեմային իրավիճակ անսովոր հարցերի, խնդիրների, հանելուկների և այլ եղանակներով: Սովորելու նկատմամբ հետաքրքրասիրությունը խթանո ուսուցման այս ձևը պահանջում է նյութի լավ իմացություն, ուստի այն արդյունավետ կլինի կիրառել գիտելիքի ստուգման ամփոփիչ դասերին կամ ամրապնդման փուլում:

Պրոբլեմային ուսուցման երկրորդ մակարդակ

Ուսուցչի կողմից պրոբլեմային իրավիճակի ստեղծում և լուծման որոնում աշակերտների հետ միասին: Այսպիսի մոտեցման համար կարելի է հանգուցալուծմանը հասնել հուշող, ուղղորդող հարցերի միջոցով <<շղթա... խաղի միջոցով, երբ մեկնաբանում է հարցի մի կողմը, իսկ մյուսները լրացնում են՝ չկրկնելով իրար: Բացի ուսումնական նխատակներից, այն լուծում է նաև դաստիարակչական խնդիրներ՝ համագործակցելու, միմյանց լրացնելու, լսելու: (օրինակ՝ ինչպես ապացուցել, որ բույսի արմատը շնչում է)

Պրոբլեմային ուսուցման երրորդ մակարդակ

Այն է ուսուցչի կողմից պրոբլեմային իրավիճակի ստեղծում և լուծման որոնում, վերջնարդյունքի ապահովում միայն աշակերտների ինքնուրույն աշխատանքի միջոցով: Այս դեպքում սովորողներ ինքնուրույն աշխատանքին կնպաստի ուսուցչի ուղղորդած լրացուցիչ գրականության օգտագործումը: Այս մակարդակը հարմար է ավելի հասուն տարիքի դասարաններում, որտեղ պահանջվում է նաև սովորողների ինքնուրույն աշխատանքի բավականաչափ փորձ: Մասնագիտական պատրաստվածության բարձր աստիճան է պահանջվում նաև ուսուցչից, ճիշտ կողմորոշվելու N այնպիսի իրավիճակներում, երբ աշակերտները առաջարկում են խնդրի լուծման արտասովոր եղանակ: Այս ամենը նպաստում է սովորողների հմտությունների կատարելագործմանը, փոխվստահության խորացմանը:

Պրոբլեմային ուսուցման չորրորդ մակարդակ (օրինակ)

Ուսուցչի առաջարկած հարցերից աշակերտների կողմից պրոբլեմային իրավիճակի ստեղծում և լուծման ինքնուրույն որոնում: Այս ձևի առանձնահատկությունը

հետազոտական մոտեցումն է: Սովորողներից պահանջվում է լրացուցիչ գրականության, անհրաժեշտ այլ ռեսուրսների ինքնուրույն որոնման հմտություններ: **Պրոբլեմային ուսուցումը** վերլուծական և ստեղծագործական մտածողության հիմքն է:

Գլուխ 2 Պրոբլեմային ուսուցման խնդիրները

Պրոբլեմային ուսուցումը զարգացնող, ոչ ստանդարտ գիտելիքների ձեռքբերմանն ուղղված ուսուցումն է: Այն շատ արդիական է, քանի որ սովորողը պատկերացում է կազմում այն մասին, թե ինչպես է ձևավորվում գիտական գիտելիքը, որ միջավայրը ճանաչելի է և կարող է տրամաբանական մտածողությամբ հանգել ճիշտ եզրահանգման: Ինքնուրույն ձեռք բերված գիտելիքը կայուն է, խորը և գիտակցված:

Պրոբլեմային ուսուցումը հենվում է տրամաբանական և որոնողական ճանաչողական գործողությունների վրա: Ըստ ռուս հայտնի հոգեբան Ռուբինշտեյնի մարդու մտածողությունը կարելի է զարգացնել միայն ճանաչողական պրոբլեմների լուծման միջոցով: Այսօր բավարար չէ երեխաների բացատրել, թե ինչ անեն: Օրակարգում այն հարցն է, թե ինչ են մտածում իրենց արածի մասին, և ինչու են դա անում: Պրոբլեմային ուսուցման կարևոր պայմաններից է անսովոր, անսպասելի թեկուզ հակասական հարցերի և իրավիճակների առաջացումը: Այս ուսուցումը կարելի է կազմակերպել դասի ցանկացած փուլում, հատկապես նոր նյութի յուրացման և ամրապնդման ժամանակ: Պրոբլեմային խնդրի լուծմանն ուղին ներառում է «ընկալման, տրամաբանական մտածողության, փայլատակման փուլերը»:

- Ընկալման փուլում սովորողը ընդհանուր պատկերացում է կազմում խնդրի մասին:
- Տրամաբանական մտածողության փուլում արդեն բացահայտում է գործնականության բուն էությունը:
- Փայլատակման փուլում ինքնուրույն գտնում է ելքը:

Պրոբլեմային դասերի պլանավորումը

Նպատակները: Վերևում բացատրվել է, որ պրոբլեմային ուսուցումը հետապնդում է այնպիսի նպատակներ, ինչպիսինն են՝ աշակերտներին օգնել դառնալու ինքնուրույն սովորողներ: Պրոբլեմային դասավանդման մոդելի հիման վրա կառուցված որոշ դասեր կարող են բոլոր նպատակները համատեղել: Իրավիճակն առնվազն պետք է բավարարի հետևյալ հինգ չափանիշները.

Չափանիշ 1. Պետք է իրական լինի:

Սա նշանակում է, որ խնդիրը պետք է, որ խնդիրը պետք է խարսխված լինի ոչ թե գիտության տվյալ ճյուղի սկզբունքներին, այլ աշակերտի իրական կենսափորձին:

Չափանիշ 2. Խնդիրը պետք է որոշ չափով ոչ հստակ ձևակերպում ունենա, որպեսզի իր խորհրդավորությամբ ու խճճվածությամբ գրավի աշակերտին:

Չափանիշ 3. Խնդիրը պետք է իմաստալից լինի և համապատասխանի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին:

Չափանիշ 4. Խնդիրը պետք է բավարար չափով ընդգրկուն լինի, որպեսզի ուսուցիչը հնարավորություն ունենա իրագործել իր ուսուցողական նպատակը:

Չափանիշ 5. Ցանկալի է, որ օրինակելի խնդրի լուծումը խմբային աշխատանք ներառի: Ինչպես ասել է Բոյերը, որ այսօրվա կրթված մարդը նա է, ով կարողանում է հարցը ճշգրիտ ձևակերպել:

Գլուխ 2.1 Կառուցողականության սկզբունքները

Առաջնային նպատակները գովելի են և պարզ: Պետք է աշակերտներին օգնել դառնալու ինքնուրույն սովորողներ և մտածողներ: Այստեղ կարևորը ոչ միայն ոգևորումն է, այլև դրա կիրառումը: Մտածելու կարողությունը հիմնված է կարևոր հարցեր արծարծելու և քննելու ունակության վրա: Հարցերը մեջ պարտադրում են նոր տեղեկատվություն ձեռք բերել, վերլուծել և ինտեգրել: Այստեղ շատ կարևոր է ոչ միայն ճշգրիտ հարցեր արծարծել, այլև դրանք տրամաբանական հերթականությամբ ներկայացնել:

Գլուխ 2.2. Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան հիմնվում է հետևյալ գաղափարի վրա. պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողին կանգնեցնում է կանխատեսված դժվարությունների առաջ, որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում և ստիպում է սովորողին մտածել, որոնել, քննարկել, ինչն էլ նպաստում է նրա իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Սովորողը պետք է ինքնուրույն որոնի խնդրի լուծումը, իսկ ուսուցիչը պարտավոր է ղեկավարել նրա ուսուցման գործընթացը՝ մոտիվացնելով, կազմակերպելով, համակարգելով, ուղղորդելով և վերահսկելով: Պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում, որ սովորողի մոտ ձևավորեն ինքնակրթության հմտություն, նպատակադրման կարողություն, ձևավորվեն և զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ, ինչպիսիք են՝ ինքնագնահատումը, ինքնավերահսկումը, փոխադարձ վերահսկումը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ապահովում է նաև ուսուցման անհատականացում ըստ ուսուցման բովանդակության, յուրացման արագության, ինքնուրույնության

մակարդակի, վերահսկման եղանակների: Էությունն այն, որ ուսուցիչը ցուցադրում է գիտական ճանաչողության, խնդիրների լուծման օրինակներ, արդյունքում ամրապնդվում ու յուրացվում են պրոբլեմային ուսուցման մեթոդներով ձեռք բերված գիտելիքները: Պրոբլեմային ուսուցման միջոցով հնարավոր է ոչ միայն արդյունավետորեն իրականացնել տեսական նյութի ուսուցումը, այլև սովորողի մոտ ստեղծել ինքնագարգացման հմտություններ: Ամբողջ գործընթացը հիմնված է առաջնային գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման և երկրորդային՝ երկարաժամկետ անհատական կարողությունների զարգացման արդյունքների գիտակցված ընտրության վրա:

Համապատասխան ռազմավարություններ

Բլումի դասակարգման շնորհիվ ուսուցիչներն առավել խորությամբ են ընկալում հարցադրումների անհրաժեշտությունը և հղկում դրանց լայն շրջանակ արծածելու հմտությունը: Սակայն հարցադրումներ կատարելու ռազմավարությունների մեծ մասը զգալի թերություններ ունի

- Հարցադրումներ կատարելու ռազմավարությունների մեծ մասը, չնայած արդյունավետ է տվյալ պահին միտքը խթանելու տեսակետից, գրեթե անգոր է աշակերտների մտածողությունն ինտեգրելու և տրամաբանված մանրագնին կշռադատված եզրակացություն ձևավորելու հարցում: Հարցադրումներ կատարելու իրավունքը դեռևս արտոնված է ուսուցչին: Սակայն աշակերտների մտածողությունը և հարցադրումներ կատարելու հմտությունը զարգացնելու համար շատ կարևոր է, որ հարցը աշակերտներն իրենք արծարծեն: Մենք պետք է աշակերտների օգնենք հղկելու դժվար և իմաստալից հարցեր արծարծելու ունակությունը: Ուսուցիչների կողմից արդյունավետ հարցադրումը խթանում է աշակերտների միտքը, սակայն ոչ միշտ է օգնում հղկելու աշակերտների հարցադրման հմտությունը: Աշակերտները մտածողության անհամեմատ առավել մեծ բարձունքների են հասնում, երբ նրանց խրախուսում են զարգացնել քննադատական և ստեղծագործական հարցեր տալու հմտությունը, երբ նրանց հնարավորություն է ընձեռնվում երկխոսություն ծավալելու դասընկերների հետ՝ մատուցված տեղեկատվության հիման վրա հարցադրումների և դրանից բխեցված եզրահանգումներ շուրջ:

Մեզ անհրաժեշտ են խնդիրների հանգուցալուծման՝ հարցերի միջոցով ուղղորդվող Ռազմավարություններ, որոնք բնորոշվում են հետևյալ հատկանիշներով:

1. Համապարփակ: Միտքն ուղղորդում է դեպի համապատասխան բոլոր փոփոխականների տեսանկյունների և տեղեկատվության քննարկում:
2. Հարմարեցվող: Հնարավոր է համապատասխանեցնել դասարանի, ունակության և ուսումնական ծրագրերի տարբեր մակարդակներ ունեցող աշակերտների պահանջներին:
3. Զատորոշող: Դրանք պետք է համապատասխանեն տարբեր իրավիճակների պահանջներին:
4. Արդյունավետ: Կիրառելի ստացվում է արդյունք, որոշում, վճիռ կամ եզրահանգում:
5. Փոխանցելի: Այս ռազմավարությունը հնարավոր է սովորեցնել աշակերտներին, որպեսզի հարցադրումներ կատարեն:

Այս ռազմավարությունները պետք է բավականաչափ բարդ լինեն խնդիրների և դեղեմանների լայն շրջանակ հանգուցալուծելու համար, բայց և միաժամանակ պետք է բավականաչափ պարզ լինեն, որպեսզի դրանք կիրառվեն տարիքային տարբեր խմբերի և հմտությունների տարբեր մակարդակների անձանց կողմից:

Գլուխ 3 Անձնական փորձ և հետազոտություն

Օրվա դասի պլան

Առարկա-Մայրենի

Դասարան 3րդ աշակերտների թիվը 29

Դասի թեման-Սողոմոն Մկրտչյան

<< Թագավորն ու հողագործը >>

Դասի տիպը- ինտեգրված դաս (բանավեճ-քննարկում)

Դասի կահավորումը- դասագրքեր, տետրեր,

գունավոր մատիտներ, համակարգիչ,

հարցաթերթիկներ, պաստառներ:

Օգտագործվող մեթոդներ-ԽԲԿ, Դերային խաղ, բանավեճ:

Դասի նպատակները`

1. Խորացնել գիտելիքները պատմվածքի բովանդակությունը ճիշտ հասկանալու մեջ:
2. Սովորողների մոտ ձևավորել իրավիճակը ճիշտ գնահատելու և արագ կողմնորոշվելու հմտություններ:
3. Արժևորել մարդու աշխատանքային գործունեությունը
4. Կարևորել միջառարկայական կապերը` երաժշտության, էկոլոգիայի, մաթեմատիկայի և դրանցով խթանել սովորողների արժեհամակարգի ձևավորումը:
5. Վերջնարդյունքում սովորողների մոտ զարգացնել մրցունակ լինելու, մասնակցել բանավեճերի:

Դասի ընթացքը

Քայլ 1. Երգ «Բարության ծառ»

Իմաստի ընկալում

Քայլ 2. Ուսուցչի խոսքը և տնային աշխատանքների ստուգում`

Ընթերցել «Հողագործն ու թագավորը» պատմվածքը

Դերերով ընթերցում:

Առաջադրել հարցեր պատմվածքի բովանդակությունը վեր հանելու համար:

Խաղ-բանավեճ-գնահատել

Թագավորի վերաբերմունքը հողագործի նկատմամբ
Գնահատել իմաստուն հողագործի վերաբերմունքը թագավորի նկատմամբ:
Խաղ «Գուշակիր, տերև»
Անվանել պտուղը և ասել համապատասխան ծառը
Կշռադատման փուլ
Ասացվածքներ բարի գործերի վերաբերյալ
Բարությունը կփրկի աշխարհը
Բարիք ստեղծես, բարին կստանաս:
Ամփոփում «Դպրոցի այգում ծառ տնկել»
Տնային աշխատանք- առաջ.1, առաջ.2

Գլուխ 3.1 Նախագիծ կարճաժամկետ նպատակով

Առարկա՝ Մաթեմատիկա
Դասարան՝ 2-րդ
Թեմա- Ամրապնդել երկրաչափական պատկերների իմացությունը
Կահավորում- Դասագրքեր, տետրեր, քանոն, քարտեր, մատիտներ, սոսինձ, թելեր:

Դասի ընթացքը՝
Խթանման փուլ՝ - ցուցադրել տոնածառ, ուշադրություն դարձնել տոնածառի խաղալիքների ձևերին:
Իմաստի ընկալման փուլ՝ ցուցադրել երկրաչափական պատկերները՝ ուղղանկյուն, շրջան, քառակուսի:
Դասարանը բաժանել 3 խմբի: Յուրաքանչյուր խմբին տրամադրել 1 երկրաչափական պատկեր և փորձել ներկայացնել ձևը: Տոնածառի խաղալիքների մեջ ցույց տալ նման երկրաչափական պատկերներով խաղալիքներ: Փորձել գունավոր թղթերը կտրել համապատասխան երկրաչափական պատկերներ:
Տոնածառի խաղալիքների վրա ցույց տալ համապատասխան երկրաչափական ձև ունեցող խաղալիքներ:

Տնային աշխատանք: Յուրաքանչյուր խումբ գտնի նախշեր՝ ձևավորելու համար:

II օր- Կերպարվեստ- Շարունակում ենք աշխատել կերպարվեստի ժամին:

Թեմա՝ - նախշագարդել երկրաչափական պատկերները:

Նպատակը՝ - Նախապես որոշված նախշերով, նկարագարդել երկրաչափական պատկերները:

Դասի ընթացքը՝ նախապես բաժանված խմբերով, շարունակել աշխատել: Յուրաքանչյուր խումբ երկրաչափական պատկերը նախշագարդում է: Յուրաքանչյուր խումբ պետք է ունենա համապատասխան նախշը:

III օր- Տեխնոլոգիա

Թեման- երկրաչափական պատկերներից տոնածառի խաղալիքի պատրաստում:

Նպատակը՝ Կարողանալ ստանալ երկրաչափական պատկերից, փայլաթղթից, թելերի միջոցով տոնածառի խաղալիք:

Դասի ընթացքը:

Յուրաքանչյուր խումբ շարունակում է աշխատել՝ նախշագարդարված երկրաչափական պատկերի վրա:

Փայլաթղթով փակցնում են եզրերը և համապատասխան անցքն են բացում, անցկացնում թելը, կախելու համար:

Արդյունքում ստանում են տոնածառի խաղալիքներ՝

Քառակուսաձև, շրջանաձև, ուղղանկյունաձև:

Խաղալիքները կախում են դասարանի տոնածառից:

Գնահատում՝ երրորդ և չորրորդ դասարանի աշակերտները փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում են լավագույն աշխատանքը:

Անփութում հայտորոշիչ թեստ

Գազավորված ըմպելիքները նպաստում են մարդու ատամների քայքայմանը:

- Այո
- Ոչ
- Չգիտեմ

Ծխախոտի ծուխը ունի մանրէասպան հատկություն: Ծխող մարդիկ չեն հիվանդանում գրիպով:

- Այո
- Ոչ
- Չգիտեմ

Վիտամինների ավելացումը օրգանիզմում կարող է բացասաբար անդրադառնալ առողջության վրա:

- Այո
- Ոչ
- Չգիտեմ

Օրվա ռեժիմը կարևոր չէ օրվա աշխատանքները ճիշտ և ժամանակին ավարտելու համար:

- Այո
- Ոչ
- Չգիտեմ

Եզրակացություն

Պրոբլեմային ուսուցումը լուծում է դաստիարակչական խնդիրներ՝ համագործակցելու միմյանց լրացնելու, լսելու: Այն կարող է հարմարեցնել բազմաթիվ առարկաների, դասարանների մակարդակների՝ կիրառելով ինչպես ողջ դասի ընթացքում, այնպես էլ՝ որպես միայն մեկ գլխի մոդել: Պրոբլեմային ուսուցումը, դա ուսուցչի կողմից պրոբլեմի առաջադրումն է, ձևակերպումը, որը ցույց է տալիս նաև դրանց լուծման ուղիները, խնդիրների լուծման օրինակներ, որի աարդյունքում էլ ամրապնդվում ու յուրացվում են պրոբլեմային ուսուցման մեթոդներով ձեռք բերված գիտելիքները: Պրոբլեմային ուսուցումը վերլուծական և ստեղծագործական մտածողության հիմքն է:

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան “ Տարրական քերականություն,
2. Նախաշավիղ-Մ. Ամիրադյան